

վուրդը, մանաւանդ երբ Պոլսոյ Եկեղեցիներուն բեմերը հոգեւոր կեանք մը չունէին այն ատեն, ոչ ալ հոգեկան բարձրութիւն:

Աստուածաբանական գիտութեան տիրանալու համար անհրաժեշտօրէն կը պահանջուէր, լաւ եւս, կ'ուսուցուէր հոգեխօսական անխռով վիճակ մը եւ անկիրք էութիւն մը: Այս պայմանները ստոյգ են բոլորովին: Մարդ եթէ չզգայ, չգիտէ, չքննէ ինքն իր ներսը, զուտ տեսականօրէն հոգեբանական գիտութիւնները մշակել՝ պարզ արուեստ մը կը դառնայ: Մարդու բնախօսական կազմուածքը՝ կիրքերու գերի եղած ատեն, կը կորսնցընէ հաւասարակշռութիւնը եւ կը թուլցընէ անհատին հոգեկան խոյանքը:

Կոլոտ շատ լաւ զգացած է այս վիճակը. «զի որ քննելիքն բարձրագոյնք իցեն, այնքան յաւէտ պարզագունի մտաց կարօտին. զի եւ արտանշմարն հայելի ի մառախլապատեն յեկամտից, զդէմն նշմարողին ոչ ցուցանէ, վասն այսորիկ վճռագունի կարօտի ապակւոյ» (ՅՆՊԻՄԻՆՆԻ Սկոթի): Հայելիի պէս պարզ, վճիտ էութիւն մ'ունենալու համար պէտք է որ այդ էութիւնը խռովող ու պղտորող պատճառները չքանան մարդուն ներսը:

Հոգեխօսական անխառն, վճիտ վիճակ մը, պարզագոյն միտք մը, բոլորովին ազատ՝ կիրքերու մառախուղէն, ամէնէն երջանիկ վայրկեաները, ոչ, տարիներն են մարդուն:

Կոլոտ այս բոլոր պայմաններուն մէջ իր անբասիր վաւքով, իբր կարող բեմբասաց եւ իբր վարդապետ, այսինքն՝ Աստուածաբան, ոչ միայն իր ժողովրդէն գնահատուեցաւ այլ նաեւ օտարներէն:

Իր ժամանակը հայ. Եկեղեցւոյ դիրքը Պոլսոյ մէջ, ինչպէս նաեւ ներքին գաւառները, շատ փափուկ էր: Կաթոլիկութիւնը հալածուած էր իրմէ յառաջ: Կոլոտ չյարգեց Կաթոլիկութեան դէմ իր նախորդներուն դործածած միջոցները: Գործածած